



LOS ANGELES COUNTY  
**CONSUMER &  
BUSINESS AFFAIRS**

BRIAN J. STIGER  
Տնօրեն

500 W. Temple Street, Room B-96  
Los Angeles, CA 90012

(800) 593-8222 Լոս Անջելեսի Քաունթիում  
(213) 974-1452 Լոս Անջելեսի Քաունթիից դուրս

Էլ. օգնություն՝ [wagehelp@dcba.lacounty.gov](mailto:wagehelp@dcba.lacounty.gov)

Կայք՝ [dcba.lacounty.gov](http://dcba.lacounty.gov)

Հետևե՛ք մեզ՝ վերջին նորությունների և  
խորհուրդների համար:

Facebook | [LACountyDCBA](#)

Instagram | [LACountyDCBA](#)

Twitter

Սպառողներ | [LACountyDCBA](#)

Փոքր Բիզնես | [LACoSmallBiz](#)

Իսպաներեն | [LACoConsumidor](#)



Լոս Անջելես Քաունթիի  
Վերահսկիչների Խորհուրդ

Hilda L. Solis, Առաջին Թաղամաս  
Mark Ridley-Thomas, Երկրորդ Թաղամաս  
Sheila Kuehl, Երրորդ Թաղամաս  
Janice Hahn, Չորրորդ Թաղամաս  
Kathryn Barger, Հինգերորդ Թաղամաս

Վերջին անգամ արդիականացվել է 12/05/2016



## ԱՆՎՃԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Լ.Ա. Քաունթիի Սպառողների և  
Գործարարների համար

- Աշխատավարձերի Գործարկում
- Սպառողների Խորհրդատվություն
- Բողոքների Ուսումնասիրում
- Աջակցություն Դատարանում Փոքր  
Հայցերով
- Միջնորդություն
- Գրավադրված Գույքի Վաճառքի  
Կանխարգելման Աջակցություն
- Փոքր Բիզնեսի Աջակցություն
- Սպառողների Կրթություն և Աջակցություն
- Ֆինանսական Հուսալիություն

Սպասարկում է Լոս Անջելես Քաունթիի  
Սպառողներին և Գործարարներին 1976թ-ից ի վեր



### Մեր Առաքելությունը

Արդար և կենսունակ շուկա  
խրախուսելու նպատակով, մենք  
ծառայում ենք սպառողներին,  
գործարարներին, և  
համայնքներին՝ կրթության,  
պաշտպանության և բողոքների  
կարգավորման միջոցով:



LOS ANGELES COUNTY  
**CONSUMER &  
BUSINESS AFFAIRS**

# Նվազագույն Աշխատավարձ Լ.Ա. Քաունթիում

## Գործարարների ՀԱՄԱՐ

FOR EMPLOYERS (ARMENIAN)



## Լ.Ա. Քաունթիի Նոր Նվազագույն Աշխատավարձ

Սկսած 2016թ.-ի հուլիս 1-ից կբարձրանա Լոս Անջելես Քաունթիում չընդգրկված շրջաններում աշխատանք իրականացնող աշխատողների նվազագույն աշխատավարձը:

Նվազագույն աշխատավարձը կբարձրանա յուրաքանչյուր տարի, մինչև 2021թ.-ը, երբ այն կհասնի \$15-ի՝ կախված Ձեր կողմից վարձած աշխատողների քանակից:

Լ.Ա. Քաունթիում չընդգրկված շրջաններում բոլոր Գործատուները պետք է վճարեն ավելացված նվազագույն աշխատավարձը՝ շատ քիչ բացառություններով:

Ե՞րբ է բարձրանում նվազագույն աշխատավարձը:

Քաունթիի նվազագույն աշխատավարձը կբարձրանա ամեն տարի Հուլիսի 21-ին:

Գործատուները իրենց աշխատողներին պետք է վճարեն ոչ պակաս քան ստորև դրույքաչափերը ըստ ժամաքանակի՝ հետևյալ ուժի մեջ մտած տարեթվերին՝

Տարի	26 կամ ավելի շատ աշխատողներով գործատուների համար	25 կամ ավելի քիչ աշխատողներով գործատուների համար
<b>2016</b>	<b>\$10.50</b>	<b>\$10.00</b>
<b>2017</b>	<b>\$12.00</b>	<b>\$10.50</b>
<b>2018</b>	<b>\$13.25</b>	<b>\$12.00</b>
<b>2019</b>	<b>\$14.25</b>	<b>\$13.25</b>
<b>2020</b>	<b>\$15.00</b>	<b>\$14.25</b>
<b>2021</b>	<b>\$15.00</b>	<b>\$15.00</b>

Ո՞վ է ռիբավոնակ նոր նվազագույն աշխատավարձ ստանալու համար:

Յուրաքանչյուր ոք, ով աշխատում է առնվազն երկու ժամ մեկ շաբաթյա ժամանակամիջոցում ԼԱ Քաունթիում չընդգրկված շրջաններում՝ շնորհվում է Քաունթիի նվազագույն աշխատավարձի իրավունքով՝ այն ժամերի համար, որոնք նա աշխատել է Քաունթիում չընդգրկված շրջանում:

Ձեր աշխատողների աշխատանքային կարգավիճակը, նրանց ապրելու վայրը, կամ, թե որտեղ է տեղակայված Ձեր բիզնեսի գլխամասը չեն որոշում կիրառվող նվազագույն աշխատավարձը:

Ձեր աշխատողներից որոշները կարող են ազատված լինել այդ օրենքից: Որոշելու համար, թե արդյոք Ձեր աշխատողներից որևէ մեկը ազատված է այդ օրենքից, գանգահարե՛ք մեզ՝ (800) 593-8222 հեռախոսահամարով, կամ գրե՛ք մեզ՝ [wagehelp@dcbalacounty.gov](mailto:wagehelp@dcbalacounty.gov) էլ.հասցեով:

Ի՞նչպես ես կարող եմ իմանալ, որ աշխատանքը կատարվել է Քաունթիում չընդգրկված շրջանում:

Որպեսզի որոշեք, թե արդյոք աշխատանքը կատարվել է Լոս Անջելես Քաունթիում չընդգրկված շրջանում, մուտքագրե՛ք հասցեն Քաունթիի Գրանցումների կայքում (Registrar-Recorder)՝ <http://rcc.lacounty.gov/OnlineDistrictmapApp/> կամ գանգահարե՛ք DCBA- ին:

Եթե Ձեր աշխատողները աշխատանքներ են կատարել Լոս Անջելես Քաունթիում չընդգրկված շրջանում, անգամ եթե Ձեր բիզնեսը կամ շահույթ չհետապնդող կազմակերպությունը չեն գտնվում Լոս Անջելես Քաունթիում չընդգրկված շրջանում, ապա Դուք առնվազն պետք է նրանց վճարեք Քաունթիի նվազագույն աշխատավարձը:

Եթե Ձեր աշխատողները աշխատանքներ չեն կատարել Լոս Անջելես Քաունթիում չընդգրկված շրջանում, ապա Դուք պետք է վճարեք նրանց Կալիֆորնիա Նահանգի կամ Ձեր բիզնեսի տեղակայման քաղաքի կողմից սահմանված նվազագույն աշխատավարձը:

Ո՞րոնք են իմ պարտավորությունները որպես գործարար կամ շահույթ չհետապնդող կազմակերպություն՝ Քաունթիի նվազագույն աշխատավարձի օրենքի շրջանակներում:

- Վճարել աշխատողներին Քաունթիի օրենքով պահանջված նվազագույն աշխատավարձի դրույքաչափը՝ Լ.Ա. Քաունթիում չընդգրկված շրջանում կատարված աշխատանքի համար:
- Երևացող տեղում ծանուցում փակցնել՝ տեղեկացնելու աշխատողներին ընթացիկ նվազագույն աշխատավարձի դրույքաչափի,

ինչպես նաև օրենքի շրջանակներում իրենց իրավունքների մասին: Կամ, եթե Ձեր բիզնեսը տեղակայված չէ որևէ ֆիզիկական տարածքում, ապա այդ ծանուցման օրինակը ուղարկել այն բոլոր աշխատողներին, որոնք աշխատանքներ են կատարում Լ.Ա. Քաունթիում չընդգրկված շրջանում: DCBA-ը կտրամադրի Ձեզ ծանուցումը, որը Դուք պետք է հրապարակեք բոլոր անհրաժեշտ լեզուներով:

- Պահպանել յուրաքանչյուր աշխատողի աշխատավարձի ճշգրիտ և ամբողջական գրանցումները՝ չորստարի ժամանակահատվածի համար:

## Բողոքների Հասցեագրում

Ի՞նչ տեղի կունենա եթե DCBA-ի Հետաքննող մարմինը կապ հաստատի իմ բիզնեսի կամ շահույթ չհետապնդող կազմակերպության հետ:

DCBA-ը աշխատում է աշխատողների և գործատուների հետ՝ ապահովելու, որ Քաունթիի նվազագույն աշխատավարձի մասին օրենքի խախտումները բացահայտվեն, հասցեագրվեն և կարգավորվեն՝ պատշաճ ժամանակին և արդյունավետ եղանակով:

Եթե DCBA-ը բողոք է ստանում Ձեր բիզնեսի վերաբերյալ, ապա մենք կապ կհաստատենք Ձեզ հետ՝ ստուգելու Ձեր աշխատավարձերի գրանցումները, ինչպես նաև հարցազրույցներ կունենաք Ձեր և Ձեր աշխատողների հետ: DCBA-ը լիազորված է թողարկելու դատական ծանուցագիր՝ խախտման որևէ դեպք բացահայտելու դեպքում:

DCBA-ը Ձեզ հետ կքննարկի ուսումնասիրության արդյունքները և թույլ կտա Ձեզ պատասխանելու ցանկացած բողոքին և ուղղելու իրավիճակը, նման անհրաժեշտության պարագայում:

Ձեզ համար հակաօրինական է վրիժառական վերաբերմունքի ցուցաբերումը այն աշխատողների հանդեպ, որոնք՝

- Պահանջում են պարտադիր նվազագույն աշխատավարձի վճարումը:
- Բողոք են ներկայացնում նվազագույն աշխատավարձի պայմանի հավանական խախտման վերաբերյալ:
- Տեղեկացնում են այլ անձանց իրենց իրավունքների կամ հավանական խախտումների վերաբերյալ:

Լրացուցիչ տեղեկատվության համար

 (800) 593-8222  [dcbalacounty.gov](http://dcbalacounty.gov)